## ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՀԱՆԳԻՍՏ

# Վանաձորի թիվ 11 ավագ դպրոցի սաները՝ Ղրիմի «Արտեկ» ճամբարում

Ցանկացած երեխա երազում է իր կյանքում գոնե մեկ անգամ հայտնվել Ղրիմի «Արտեկ» ճամբարում, անցկացնել իր հանգիստն այդ անմոռանալի վայրում, ծանոթանալ Ղրիմի պատմությանը, մշակույթին, ձեռք բերել ընկերներ, զգալ ամառային հանգստի ողջ հրապույրը: Այդ երազանքն իրականություն դարձավ Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցի տասը սաների համար, ովքեր 2017 թվականի ապրիլ ամսին մասնակցեցին ռուսաց լեզվի միջազգային առարկայական օլիմպիադային, հաղթող ճանաչվեցին և ամռանը մեկնեցին Ղրիմ: Լիլիթ Մանուչարյան, Լիանա Դունամալյան, Էլիզա Գարանյան, Նոռա Մխոյան, Միլենա Մելքոնյան, Էլմիրա Շահվերդյան, Անի Շահվերդյան, Հրանտ Բաբայան, Վազգեն Եղոյան, Գագիկ Ասլանյան՝ ահա այն աշակերտները, ովքեր վաստակեցին «Արտեկ» ճամբարի սաները կոչվելու իրավունքը:

Ճամբարի ծրագիրն ուսուցողական էր, զվարճալի, ճանաչողական, հետաքրքիր ու բազմաբովանդակ: Երեխաներն իրենք էին ընտրում իրենց նախասիրությանը համապատասխան թիմեր:

Վանաձորի թիվ 11 ավագ դպրոցի սաները փայլեցին սպորտային, լուսանկարչական, ձևավորման մրցույթներում՝ բարձր պահելով թե՛ դպրոցի, թե՛ հայի պատիվը: Մարզական մրցումներում Էլիզա Գարանյանը և Միլենա Մելքոնյանը գրավեցին 1-ին տեղերը (վոլեյբոլ), Էլիզա Գարանյանը՝ 1-ին տեղ (արտբոլ), Գագիկ Ասլանյանը՝ 3-րդ տեղ (արտբոլ), Նոռա Մխոյանը՝ 1-ին տեղ (ճկունություն), Վազգեն Եղոյանը սպորտային ռեկորդ սահմանեց, Միլենա Մելքոնյանը՝ հավաստագիր (ծիավարժություն) և ձեռնամարտից՝ 1-ին տեղ, Հրանտ Բաբայանը «Տուրգրադ» անվանակարգում՝ 2-րդ տեղ, Լիանա Դունամալյանը, Լիլիթ Մանուչարյանը, Նոռա Մխոյանը «Բժիշկ Այբոլիտի դպրոց» անվանակարգում՝ հավաստագրեր և պատվոգրեր, լուսանկարչական և դիզայնի մրցույթներում Էլիզա Գարանյանը և Անի Շահվերդյանը՝ հավաստագրեր, Միլենա Մելքոնյանը՝ մեդալ՝ արվեստում ձեռքբերումների համար:

Դպրոցի սաներ Էլիզա Գարանյանը, Միլենա Մելքոնյանը և Էլմիրա Շահվերդյանը փայլեցին իրենց շարադրություններով և հռետորական արվեստին բնորոշ առոգանությամբ, ինչը մրցույթի ժամանակ պարտադիր պայման էր, և գրավեցին պատվավոր տեղեր՝ ստանալով հուշանվերներ, իսկ Էլմիրա Շահվերդյանը, Անի Շահվերդյանը, Լիանա Դունամալյանը, Վազգեն Եղոյանը, Գագիկ Ասլանյանը, Հրանտ Բաբայանը, Նոռա Մխոյանը, Լիլիթ Մանուչարյանը, Միլենա Մելքոնյանը, Էլիզա Գարանյանը ռուսաց լեզվի մրցույթում արժանացան պատվոգրերի և մեդալներ:

Անցկացվեց նաև «Ազգերի բարեկամություն» խորագրով մրցույթ, որտեղ յուրաքանչյուր երկիր ներկայացրեց իր երգը, պարը, մշակույթը, ասմունքը: Մեր սաներն այստեղ էլ փայլեցին իրենց երգ ու պարով՝ արժանանալով պատվոգրերի և ժյուրիի գովասանքին: Երգի և պարի մրցույթում Լիանա Դունամալյանը, Էլիզա Գարանյանը և Միլենա Մելքոնյանն արժանացան գլխավոր մրցանակին, իսկ Գագիկ Ասլանյանը, Վազգեն Եղոյանը, Հրանտ Բաբայանը նույն մրցույթներում գրավեցին 1-ին տեղերը: Անհատական կատարումներում Միլենա Մելքոնյանն ասմունքի և Լիանա Դունամալյանը երգի մրցույթներում գրավեցին պատվավոր առաջին հորիզոնականները:

Հպարտությամբ կարող ենք նշել, որ երեխաները հայրենիք վերադարձան բազմաթիվ մրցանակներով և վառ տպավորություններով, ինչպես նաև արժանացան «Կոլեկտիվի հոգի» թիմային մրցույթի հաղթողի կոչման:

*Սեփ. լրատվություն*

**«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆԻ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ (1 ԴԱՍԱԺԱՄ) ԵՎ ԵՐԳ-ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ (3 ԴԱՍԱԺԱՄ) ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ**

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1).
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև նոյեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 13-ին՝ ժամը 14-ին, Օձունի N 2 միջնակարգ դպրոցում: Հեռ. (0253) 6-19-17: *ԸՆՏՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*

**«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ (8 ԴԱՍԱԺԱՄ) ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ**

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համ...

...րին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև նոյեմբերի 8-ը ներառյալ, ամեն...

**«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐՑԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ը...**